գրագրայն՝ զոր ինչ և գրէին, որոյ տեսրունքն գոն ի Ս. Աթոռս, յորոց և նարդեանս գրագիրքն առնուն զօրինակս գրելեաց իւրեանց։ Կաթուղիկոսք ժամանակին զՍա ունէին խորհրդակից և վճռաւոր։ Եւ էր տեղեակ արքունական և դատաւորական սարշտայից[1])։ Եւ նա գրէր և հոգար զգրոց արքունականաց և դատաւորականաց, և պահէր ի պատրաստի։ Ունի և զանհամար բարեբարութիւնս ի ս. Աթոռոջս և զգրեանս հոգացեալս, զորս յետոյ գրեսցուք։ Շինեաց և ի յԵրեւան ի Զորագեղջ Անապատոյն զտունս Հայրապետանիստս, և պատեաց բարձրաբերձ պարսպօք և բրգօք՝ որպէս այժմ նստեն Հայրապետք ի գնալն իւրեանց յԵրեւան։ Այսու բարուք կառավարմամբ ի Տէր փոխի ի ՌՄԺԲ. թուականն և դնի ի յաջակողմն գաւթի սրբոյն Գայեանեայ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»։

Նոյն Սիմէոն կաթուղիկոսն էջ. 21 յերես 232 այսպէս գրէ

«Զկնի այս Հասան-Ալի Խանիս, նստի Երեւան խան սորին եղբայր Հիւսէյին-Ալին և տիրէ որպէս թէ ինքնագլուխ, որ իշխէ եւս ի ներկայումս, ի ժամանակս մեր։ Ի ժամանակս որում նստի կաթուղիկոս յԱթոռս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսն (զոր ի բազում տեղիս յիշեալ եմք) ի ՌՄԸ. թուականս մերում, և ի տաճկաց ՌՃՀԳ. թուականն։ Արդ այս Յակոբ Կաթուղիկոս գոլով այր հանճարեղ, խելօք և տեղեակ ամենայնից այսպիսեաց իրակուութեանց, մինչ տեսանէ ի ժամանակս իւր ոչ գոյ հանրապէս իշխող թագաւոր, և առաջնոց թագաւորաց ռազամիցն եւս ոչ այնքան անսայլին, վասն որոյ զամենայն ռազամսն հնոց թագաւորաց (որք տրեցեալք են սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոց յառաջնոց Հայրապետացն իւրաքանչիւրքն վասն յատուկ յատուկ խնդրոց), ի մի բերեալ և ժողովեալ զնիւթս և զդիտմունս նոցին, և զաւելի խընդիրս եւս ինքն մուծանէ ի նոսա. և գրեցուցեալ ի վերայ թղթոյ միոյ արզայապէս մատուցանէ յիշեալ Հիւսէյին Ալի Խանին ասելով թէ՝ որովհետեւ մեր իշխողն այսօր դու ես, ի գլուխ թղթոյս հրաման և ռազամ գրեա, զի քոյդ հրամանաւ կատարեսցին այ-

[1])Հարցմունք, օրէնք։